**2022թ. չորրորդ եռամսյակի**

**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի**

**կողմից կատարված աշխատանքների**

# Հաշվետվություն

**1. «Սևան» ազգային պարկի պահպանություն.**

**Պահպանության ծառայություններ, աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով.**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի աշխատողների և հատուկ նշանակության ջոկատի կողմից իրականացվել է ամենօրյա, ինչպես նաև հատուկ նշանակության ջոկատի կողմից շուրջօրյա հսկողություն՝ անտառային օրենսդրության խախտումների և այլ բնապահպանական խախտումների կանխարգելման, հայտնաբերման ուղղությամբ:

2022 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում արձանագրվել է բնապահպանական խախտման 29 դեպք, որից 6-ը՝ ապօրինի շինարարության, 8-ը՝ ռելիեֆի խախտման, 2-ը՝ ապօրինի արածեցման, 11-ը՝ ապօրինի ծառահատման, 2-ը՝ խեցգետնաորսիչների հայտնաբերման դեպք:

Հայտնաբերված բոլոր իրավախախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և ուղարկվել են իրավասու մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու, իրավախախտողին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

2022թ. չորրորդ եռամսյակի ընթացքում պարկի տարածքում արձանագրվել է հրդեհի 1 դեպք: Հրդեհը եղել է փոքրամասշտաբ և արագ արձագանքման արդյունքում ՊՈԱԿ-ի ավագ տեսուչների և հրշեջ փրկարարական ծառայության աշխատողների կողմից մարվել են:

**2. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.**

**-Գիտական հետազոտությունների, մշտադիտարկման և կադաստրի վարման բաժնի աշխատակիցների կողմից գիտական հետազոտությունների իրականացում.Ձկան և խեցգետնի պոպուլյացիաների ուսումնասիրություն մեծ Սևանում և փոքր Սևանում.**

2022թ. չորրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Վարդենիկ, Մասրիկ և Դրախտիկ գետերի տարբեր հատվածների ջրերում $20^0$ C-ում և $37^0$ C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը և կոլի-ինդեքսը (աղիքային խմբի ցուպիկների մանրէների քանակը 1լ ջրում): $20^0$ C-ում և $37^0$ C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների հարաբերակցության արժեքի հիման վրա որոշվել է գետի ինքնամաքրման ինտենսիվությունը: Վարդենիկ և Մասրիկ գետերում զուգահեռ ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի, ինչպես նաև օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքից ելնելով՝ կատարվել է գետերի ջրերի որակի գնահատում: Նմուշառումը կատարվել է հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին:

**Գետ Վարդենիկ**

**Վերին հոսանք-** $20^0$ C-ում և $37^0$ C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1000 ԳԱՄ/մլ և 58 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը 0,36 հզ. ԳԱՄ/լ: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 9,8 մգO/դմ$^3$, իսկ պերմանգանատային օքսիդման արժեքը՝ 1,4 մգO/դմ$^3$ (աղ. 1): Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը ($20^0$ C-ում և $37^0$ C-ում աճող սապրոֆիտ մանրէների հարաբերակցություն) կազմել է 17,2:

**Աղյուսակ 1. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակության և պերմանգանատային օքսիդացման արժեքը Վարդենիկ գետի տարբեր հատվածների ջրերում**

| Դիտակետ | Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ | | Կոլի-ինդեքս հզ. ԳԱՄ/լ | Լուծված թթվածին, մգ$O_2$/դմ$^3$ | Պերմանգանատային օքսիդացում մգO/դմ$^3$ |
|---|---|---|---|---|---|
| | $20^0$ C | $37^0$ C | | | |
| Վերին հոսանք | 1000 | 58 | 0,36 | 1,4 | 9,8 |
| Վարդենիկ համայնքի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքից մոտ 100մ ներքև | 140000 | 28000 | 1800 | 5,1 | 8,8 |
| Գետաբերան | 7200 | 1300 | 200 | 1,7 | 10 |

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N09 հրամանի՝ «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2 -15-001-18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին որոշման՝ ընդհանուր կոլիֆորմ մանրէների թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/100մլ: Նշված արժեքը Վարդենիկ գետի վերին հոսանքում չի գերազանցել ՍԹԿ-ն (սահմանային թույլատրելի կոնցենտրացիա):

**Վարդենիկ համայնքի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքից մոտ 100մ ներքև-** հոսքաջրերը անարգել թափվելով գետ, այն ենթարկում են մանրէներով խիստ աղտոտման: Այսպես $20^0$ C և $37^0$ C աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 140000 ԳԱՄ/մլ և 28000 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 1,8 մլն ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 360 անգամ: Վերին հոսանքի համեմատ բարձրացել է պերմանգանատային օքսիդացման արժեքը՝

կազմելով 5,1 մգO/դմ$^3$ , իսկ ջրում լուծված թթվածնի պարունակությունը՝ նվազել է (8,8 մգ$O_3$/դմ):

**Գետաբերան-** կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հոսքաջրերի մուտք-գետաբերան հատվածում գետը ինքնամաքրվում է, որի արդյունքում հետազոտված մանրէների թվաքանակը նախորդ դիտակետի համեմատ նվազել է: Այսպես 20$^0$ C-ում և 37$^0$ C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 7200 ԳԱՄ/մլ և 1300 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 200 հզ. ԳԱՄ/լ, որը սահմանային թույլատրելի կոնցենտրացիան գերազանցել է 40 անգամ: Գետաբերանի հատվածում ավելացել է ջրում լուծված թթվածնի պարունակությունը և ակունքի համեմատ նվազել է ինքնամաքրման գործընթացը (5,5): Նախորդ դիտակետի համեմատ մոտ 3 անգամ նվազել է նաև պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 1,7 մգO/դմ$^3$:

**Գետ Մասրիկ**

**Գետաբերան-** 20$^0$ C-ում և 37$^0$ C-ում աճող ապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 4600 ԳԱՄ/մլ և 200 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսի արժեքը՝ 2,7 հզ. ԳԱՄ/լ, որը չի գերազանցել սահմանային թույլատրելի կոնցետրացիան: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 9,7 մգO/դմ$^3$, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,9 մգO/դմ$^3$ (աղ. 2): Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 23:

**Աղյուսակ 2. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակության և պերմանգանատային օքսիդացման արժեքը Մասրիկ գետի գետաբերանի հատվածի ջրերում**

| Դիտակետ | Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ | | Կոլի-ինդեքս հզ. ԳԱՄ/լ | Լուծված թթվածին, մգ$O_2$/դմ$^3$ | Պերմանգանատային օքսիդացում մգO/դմ$^3$ |
|---|---|---|---|---|---|
| | 20$^0$ C | 37$^0$ C | | | |
| Գետաբերան | 4600 | 130 | 2,7 | 9,7 | 1,9 |

**Գետ Դրախտիկ**

**Վերին հոսանք-** 20$^0$ C-ում և 37$^0$ C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 4000 ԳԱՄ/մլ և 270 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսի արժեքը՝ 0,7 հզ. ԳԱՄ/լ (աղ. 3):

**Դրախտիկ համայնքից դուրս հոսող հատված-** գետը հոսելով համայնքի տարածքով, աղտոտվում է մանրէներով՝ հատկապես աղիքային ցուպիկներով:

Այսպես, $20^0$ C-ում և $37^0$ C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 6000 ԳԱՄ/մլ և 430 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 8 հզ. ԳԱՄ/լ:

**Գետաբերան**- նախորդ դիտակետի և գետաբերանի հատվածում գրանցված արդյունքները շատ քիչ են տարբերվում միմյանցից: Մանրէների միջոցով իրականացվող ինքնամաքրման արժեքը կազմել է 14,8: Գետաբերանի հատվածում կոլի-ինդեքսի արժեքը կազմել է 10,8 հզ. ԳԱՄ/լ, որը 2 անգամ գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան: Սապրոֆիտ մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման գործընթացը գետի վերին հոսանքից դեպի գետաբերան գրեթե չի փոխվել (14) :

**Աղյուսակ 3. Սապրոֆիտ մանրէների թվաքանակը և կոլի-ինդեքսը Դրախտիկ գետի տարբեր հատվածի ջրերում**

| Դիտակետ | Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ | | Կոլի-ինդեքս, հզ ԳԱՄ/լ |
|---|---|---|---|
| | $20^0$ C | $37^0$ C | |
| Վերին հոսանք | 4000 | 270 | 0,7 |
| Համայնքից դուրս հոսող հատված | 6000 | 430 | 8 |
| Գետաբերան | 5500 | 370 | 10,8 |

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքից պարզ է դարձել, որ գետերը համայնքների տարածքներով հոսելիս աղտոտված են ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով: Սապրոֆիտ մանրէների միջոցով կատարվող ինքամաքրման գործընթացը Վարդենիկ գետի վերին հոսանքից դեպի գետաբերան նվազել է (17,2-5,5), իսկ Դրախտիկ գետում գրեթե չի փոխվել (14): Մասրիկ գետի գետաբերանի հատվածում այն կազմել է 23:

Վարդենիկ և Դրախտիկ գետերի գետաբերանի հատվածում կոլիֆորմ բակտերիաները ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերի՝ ՀՀ առողջապահության նախարարության սահմանած չափաքանակը համապատասխանաբար գերազանցել են 40 և 2 անգամ, իսկ Վարդենիկ համայնքի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի գետ լցվող հատվածում՝ 360 անգամ: Նշված հատվածների ջրերը չի թույլատրվում օգտագործել ռեկրեացիոն նպատակով:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման, ըստ $37^0$ C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Վարդենիկ և Դրախտիկ գետերի վերին հոսանքների ջրերը պատկանում են «մաքուր» ջրերի դասին: Վարդենիկ գետի գետաբերանի հատվածում ջուրը դասվել է «միանգամայն մաքուր», իսկ Դրախտի գետը՝ «մաքուր» ջրերի դասին: Վարդենիկ համայնքի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի գետ թափվող հատվածներում ջուրը դասվել է «շատ կեղտոտ» ջրերի դասին:

Համաձայն կոլի-ինդեքսի արժեքների՝ գետերի վերին հոսանքներում ջուրը գնահատվել է որպես «մաքուր»: Գետաբերանի հատվածներում Վարդենիկ գետը դասվել է «շատ կեղտոտ», իսկ Դրախտիկ գետը՝ «ուժեղ աղտոտված» ջրերի շարքում:

**2022թ. չորրորդ եռամսյակում գլխավոր ձկնաբան-ձկնաբույծի կողմից Սևանա լճում ուսումնասիրություն է կատարվել Սևանա լճի ձկնատեսակների կենսաբանական վիճակի վերաբերյալ:**

**Սիգ**- 2022թ. չորրորդ եռամսյակում Սևանա լճում սիգի արդյունագործական որսի ժամանակ ուսումնասիրություններ են իրականացվել փոքր Սևանի՝ Ծովազարդ և մեծ Սևանի՝ Նորատուս, Լիճք համայնքների ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգի ինտենսիվ արդյունահանման վայր:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Սևանա լճում կատարված ձկնաբանական հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ եթե սնման փուլում (ապրիլ-մայիս) սիգի հիմնական կուտակումները նկատվել են մեծ Սևանի կենտրոնական հատվածում՝ ափից 2000 մետր և ավել հեռավորությունների վրա, ապա նախաձվադրային շրջանում (հոկտեմբեր-նոյեմբեր) սիգի ձևավորված վտառները կենտրոնացվել է մեծ Սևանի միջին և արևելյան հատվածներում; Փոքր Սևանում կուտակումներ են հայտնաբերվել Ծովազարդ, Արևիկ, Շորժա համայնքների ջրային տարածքներում: Հոկտեմբերին ձևավորված սիգի բազմացող վտառը մի քանի անգամ գերազանցել է սնման շրջանում ձկների խտությանը:

Փոքր Սևանի պելագիալում ձուկը տեղաբաշխված է հիմնականում 15-20մ. խորություններում, ինչը վկայում է լճի այդ հատվածներում նախաձվադրող սիգի կուտակումների առկայության մասին; Ջրային այդ հատվածներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների միջին երկարությունը՝ 31,1 սմ. է, քաշը՝ 402,0 գրամ, բտվածության գործակիցը՝ F = 1,38, K = 1,24 (փ. Սևան, Ծովազարդ): Մեծ Սևանում՝ Լիճքի և Նորատուսի ջրային հատվածներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների երկարությունը նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տատանվել է՝ 34,3 – 34,9 սմ., քաշը՝ 499,7 – 538,1 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F = 1,29 – 1,38, K = 1,12 - 1,24: Ուսումնասիրված սիգ տեսակի ձուկը հիմնականում ներկայացված է $1^+$,$2^+$,$3^+$ և $4^+$ տարեկան ձկներով, որոնք գտնվել են սեռահասունության տարբեր փուլերում: Հասունացման աստիճանների այսպիսի տարբերությունը ձկների միևնույն վտառի սահմաններում ցույց է տալիս, որ հասուն ձկների շարքում նախաձվադրող վտառում առկա են նաև ոչ սեռահասուն երիտասարդ առանձնյակներ, որոնք չեն կարող մասնակցել վերարտադրման գործընթացին:

Ձկների բտվածության միջին արժեքները ուսումնասիրվող ժամանակահատվածում մնացել են նույնը, ինչպիսին գրանցվել են ապրիլ ամսին

սիգի սնվող վտառի մոտ: Վերոհիշյալ փաստը վկայում է լճում կերային բազայի առատության մասին:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարվա չորրորդ եռամսյակում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ սիգ տեսակի ձկան հիմնական կուտակումների գոտիները տարածականորեն մնացել են նույնը: Մեծացել է կուտակման գոտիների հանդիպման հաճախականությունը, որը նույնպես վկայում է լճում ձկան ընդհանուր պաշարների որոշակի աճի ակտիվության մասին:

Ուսումնասիրությունների ժամանակահատվածում ջրի մակերեսային շերտի ջերմաստիճանը օրվա տարբեր ժամերի և լճի տարբեր խորության գոտիներում տատանվել է՝ $10^0$c – $15^0$c սահմաններում:

Սիգի միջին բեղունությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել է՝ 14000-27000 հատ ձկնկիթ;

Չորրորդ եռամսյակում Սևանա լճում ձկնաբանական ուսումնասիրություններից ելնելով կարելի է եզրակացնել, որ սիգ տեսակի ձկները որոնք գտնվում են սեռահասունության III-IV և IV-V փուլերում, վերարտադրող սիգ տեսակի ձկների ձևավորված վտառների ձվադրման շրջանը ամենայն հավանականությամբ տեղի կունենա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից մինչև հունվարի երկրորդ տասնօրյակը: Առավել ինտենսիվ գործընթաց կարելի է սպասել հունվարի առաջին տասնօրյակում, Սևանա լճի ափամերձ գոտու ամբողջ երկայնքով՝ 5-15 մետր խորությունների վրա:

**Կարաս**- Հետազոտվող ժամանակահատվածում կարասի կշռային և գծային աճի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ 2018թ. նույն ժամանակաշրջանի հետ համեմատ, կարասի միջին գծային չափերը փոքրացել են, փոքրացել են նաև միջին կշիռը և առավելագույն չափերը:

Կարասի աշնանային սնվող վտառի միջին քաշը (40 մմ. և ավել խորշեր ունեցող դնովի ցանցերում) կազմել է՝ 135,8 գրամ, երկարությունը՝ 15,7 սմ.: Բտվածության գործակիցը՝ F = 3,65, K = 2,93 (մ. Սևան, Ծովինար): Փոքր Սևանում՝ Դրախտիկ համայնքի ջրային տարածքում ուսումնասիրվող կարասի միջին երկարությունը կազմել է՝ 15,5 սմ., քաշը՝ 142,0 գրամ: Բտվածության գործակիցը՝ F = 3,73, K = 3,03: Հագեցվածությունը գարնանային ուսումնասիրությունների համեմատ մեծ փոփոխությունների չի ենթարկվել, ինչը խոսում է տարվա ընթացքում կարասի համեմատաբար կայուն կերային բազայի առկայության մասին:

Հոկտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում հետազոտված առանձնյակները պատկանել են՝ $2^+$,$3^+$,$4^+$ և $5^+$ տարիքային խմբերի: Ծովինարի ջրային տարածքում ուսումնասիրվող կարասի կերի հիմնական բաղադրիչը կազմել են դետրիտը, ֆիտոպլանկտոնային օրգանիզմները: Դրախտիկի ջրային տարածքից որսված կարասի առանձնյակները սնվել են զոոպլանկտոնով: Ուսումնասիրությունների ժամանակահատվածում ջրի մակերեսային շերտի ջերմաստիճանը տատանվել է՝ $16,0^0$c – $20,0^0$c: Սևանա լճում կարասի պոպուլյացիայի վրա արդյունագործական

ծանրաբեռնվածության աճը բերել է պաշարների կրճատման, մեծ տարիքային խմբի ձկների քանակը քչացել են, տեղի է ունեցել պոպուլյացիայի երիտասարդացում:

**Խեցգետին**- 2022թ. չորրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել են խեցգետնային համակեցության էկոլոգիկան հետազոտություններ: Խեցգետնի թակարդներով փորձանմուշներ են ձեռք բերվել փոքր Սևանի՝ թերակղզու և մեծ Սևանի՝ Ջիլ համայնքի ջրային տարածքներից: Ուսումնասիրվող տարածքները ընտրվել են հաշվի առնելով լճում խեցգետնի առավել ինտենսիվ արդյունահանման հատվածները և միաժամանակ ընդգրկել են հետազոտման առավել մեծ տարածք:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ խեցգետինների միջին երկարությունը փոքր Սևանում համապատասխանաբար եղել է՝ 10,1 սմ., կշիռը՝ 26,3 գրամ, մեծ Սևանում 10,3 սմ., կշիռը՝ 29,3 գրամ:

Սևանա լճում խեցգետնի տարածական տեղաբաշխման հետազոտությունները ցույց են տվել, որ այս կենդանիները (1-3 տարեկան) հիմնականում կենտրոնացված են 2-6 մետր խորություններում: Առավել խոշոր առանձնյակները (4-7 տարեկան) լճում հանդիպում են սահմանափակ քանակով և հիմնականում նախընտրում են 5-10 մետր խորությունները: Մինչև մեկ տարեկան կենդանիներ են հանդիպում մակրոֆիտներով ծածկված ծանծաղուտներում, նշված վայրերը նրանց համար ծառայում են ոչ միայն որպես թաքստոց, այլև որպես սննդի աղբյուր:

Ի տարբերություն նախորդ տարիների մոդալ տարիքային խմբերից գերակշռում են 2-3 տարեկան կենդանիները, ընդ որում փոքր Սևանում կենդանիների միջին երկարությունները աննշան չափով փոքր են մեծ Սևանի համեմատ, ինչը հավանաբար տվյալ տարածքներում պոպուլյացիայի վրա գերծանրաբեռնվածության արդյունք է:

**-Արդյունագործական ձկնորսություն**

Համաձայն ՀՀ կառավարության 2022 թ. օգոստոսի 24-ի N1335-Ն որոշման՝ սիգի արդյունագործական ձկնորսության պայմանագրեր կնքվել են 11 կազմակերպությունների հետ, ներառյալ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը՝ 300300 կգ սիգ տեսակի ձկան որս իրականացնելու համար: 11 կազմակերպություններում ընդգրկված են 780 ձկնորսներ: Որս իրականացվել է 10 կազմակերպությունների կողմից «Սևան» ազգային պարկի 23 մուտքի կետերից՝ 2022 թ. սեպտեմբերի 1-ից նոյեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում: Որսվել է ընդհանուր 277120 կգ քաշով սիգ տեսակի ձուկ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում սիգ ձկնատեսակի արդյունագործական որսի նպատակով ընդունվել է 576 հայտ, կնքվել է 552 պայմանագիր: Որս իրականացվել է 543 պայմանագրերով:

**-Կադաստրի վարման գլխավոր մասնագետի և մշտադիտարկման մասնագետի կողմից** 2022թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական և

իրավաբանկան անձանց հետ կնքվել է վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի վերաբերյալ 2 հողօգտագործման պայմանագիր, 6 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել է տվյալների փոփոխություն, կնքվել է 6 համաձայնագիր՝ վարձավճարի փոփոխության վերաբերյալ, 4 պայմանագիր դատարանի վճռով դադարեցվել է: Կատարված փոփոխությունների վերաբերյալ ուղղումներ են կատարվել տվյալների բազայում:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող գտնվող պետական գրանցման ենթակա գույքային միավորների՝ թվով 55, չափագրման աշխատանքների իրականացման նպատակով կայացել է մրցույթ: Մրցույթում հաղթող ճանաչված չափագրող ընկերությունը ներկայացրել է թվով 51 գրանցման ենթակա գույքային միավորների կոորդինատային հատակագծեր, իսկ գույքային միավորների մնացած մասի հատակագծերը համաձայն պայմանագրի կներկայացվեն մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը: ՊՈԱԿ-ը դիմել է համայնքներին անշարժ գույքերի հասցեների տրամադրման համար, որից հետո անհրաժեշտ փաստաթղթերը կներկայացվեն կադաստրի կոմիտե իրավունքի պետական գրանցման համար:

**-2022թ. Չորրորդ եռամսյակում գլխավոր ճարտարապետի կողմից իրականցվել են հետևյալ աշխատանքները՝**

1. «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանության» EU4Sevan ծրագրով «Սևան» ազգային պարկի նոր կառավարման պլանի կազմման աշխատանքների շրջանակներում՝ ծրագրի ներկայացուցիչների հետ համատեղ համայնքների և «Սևան» ազգային պարկի սահմանների ճշգրտում:
2. Մարտունու մասնաճյուղի Ծովինար տեղամասում մաքրման ենթակա տարածքների նշահարում: Վարդենիկ տեղամասում մաքրված տարածքների չափագրում և դրանց կատարման սխեմաների ու հաշվարկների կազմում:
3. «Գեղարքունիք- 7» միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթերի ու նախագծերի ուսումնասիրություն և դրանց լրամշակման վերաբերյալ դիրքորոշման տրամադրում:

**-Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.**

**Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառգիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ.**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2021թ. նոյեմբերի 29-ի N546-Լ հրամանի համաձայն շարունակվում են Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման միջոցառումների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով աշխատանքային խմբի աշխատանքները: Կատարվում են նշահարումներ, մաքրվող տարածքներում առկա ծառերի համար հաշվեգնահատման ցուցակներ կազմելու և փայտանյութի ծավալները հաշվառելու համար:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալի №Ն/16.10/9717 հանձնարարականի 1-ին կետի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պ/կ-ի 2022թ. նոյեմբերի 25-ի №539-Լ հրամանի համաձայն կազմված հաշվեգնահատման ցուցակներին համապատասխան դուրս են գրվել № 000227 և №000228 անտառհատման տոմսերը Մարտունի մասնաճյուղի Ծովինար տեղամասի №5, №11, №18 (4,96 հա մակերեսով), №40, №41, №42 (8,17 հա մակերեսով), քառակուսիների համար: Սպասվելիք ելքի ընդհանուր ծավալն է՝ 247,555 խիտ մ$^3$: Մթերման ավարտի ժամկետն է՝ 30.12.2022թ.:

2022 թվականի չորրորդ եռամսյակում շարունակվել են ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները, որոնց ընթացքում Մարտունու մասնաճյուղի Վարդենիկ և Ծովինար տեղամասերում իրականացվել են ավելի քան 15 հա ջրածածկ տարածքների անտառմաքրման աշխատանքներ, որը կատարողական ակտով կներկայացվի շրջակա միջավայրի նախարարություն մինչև եռամսյակի ավարտը: Եվս 11.55 հա տարածքի համար կազմվել է կատարողական ակտ և հանձնվել շրջակա միջավայրի նախարարություն:

Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2022թ. հուլիսի 26-ի N355-Ա հրամանի համաձայն Մարտունու մասնաճյուղում շարունակվել են ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման արդյունքում մթերված փայտանյութի (շինափայտի և վառելափայտի) արտահանման աշխատանքները: Արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստ է մուտքագրվել 111,475 մ$^3$ շինափայտ, 320 մ$^3$ չխտացված վառելափայտ, 310 մ$^3$ չխտացված ջախ: Շինափայտն ու վառելափայտը վաճառվել են, իսկ ջախը՝ համաձայն շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2022թ. սեպտեմբերի 29-ի N16.11/6976-2022 հանձնարարականի անհատույց տրամադրվել է Մարտունի համայնքի անապահով ընտանիքներին: Փայտանյութի մնացորդը 15.12.2022թ. դրությամբ կազմում է 12 մ$^3$ Շինափայտ, 17 մ$^3$ չխտացված վառելափայտ, պահեստային ջախի անհատույց տրամադրման աշխատանքները ընթանում են, մնացորդը կներկայացվի եռամսյակի ավարտին:

2022 թվականի հոկտեմբերի 27-28-ը ներառյալ և 2022 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 4-ը ներառյալ շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 21.10.2022թ. №862-Ա, «Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 25.10.2022թ. №1308-Ա և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 26.10.2022թ. № 1691-Ա հրամաններով ստեղծված աշխատանքային խմբի կողմից կատարվել են ուսումնասիրություններ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի անտառածածկ տարածքներում ձյունակոտոր, քամատապալ, ցցաչոր, հիվանդություններով վարակված ծառերի հատումներ իրականացնելու և սանիտարական վիճակի բարելավման նպատակով: Արդյունքում աշխատանքային խմբի կողմից կատարված առաջարկների և

դիտողությունների վերաբերյալ շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 18.11.2022թ. №Ն/16.11/9436 հանձնարարականի, ինչպես նաև «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պ/կ-ի 2022թ. նոյեմբերի 21-ի № 19-2891 հանձնարականի հիման վրա կատարվել են ծառերի համարակալման, հաշվեգնահատման ցուցակների ուղղման աշխատանքներ և չեղարկվել են հատման ոչ ենթակա ծառերի համարակալումները կարմիր գույնի ներկով:

Համաձայն շրջակա միջավայրի նախարարի տեղակալի №Ն/16.10/9964 հանձնարարականի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պ/կ-ի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի №549-Լ հրամանի՝ հաստատվել է սանիտարական հատումների տարեկան ծավալը և դուրս է գրվել 27 անտառհատման տոմս ըստ պահաբաժինների, ինչի արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը ինքնապատրաստման եղանակով մթերելու է 2104,2 մ$^3$ չխտացված փայտանյութ: Մթերման և արտահանման աշխատանքները ընթանում են հատումներին զուգահեռ, աշխատանքների ժամկետը՝ 02.12.2022թ.-30.12.2022թ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2022թ. հոկտեմբերի 27-ի N 506-Լ հրամանի համաձայն ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում՝ բոլոր պահաբաժիններում 2022թ. հոկտեմբերի 28-ից սկսվել են աշնանային հերթական և վերահսկողական ստուգումները և ավարտվել՝ նոյեմբերի 18-ին: Ստուգումների վերաբերյալ ամփոփ տեղեկագրերը ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարություն, իսկ հայտնաբերված խախտումները ներկայացվել են ոստիկանություն և ԲԸՏՄ համապատասխան ընթացք տալու համար:

Նոյեմբեր ամսին Մարտունու մասնաճյուղի տնկարանային տնտեսությունում դրվել են 10 կգ կաղնու, 5 կգ լայնատերև թխկի տեսակի ծառի և 10 կգ վայրի տանձենու սերմեր:

- **«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում.**

2022 թվականի չորրորդ եռամսյակում ՊՈԱԿ-ի գործունեության առավել կարևոր մանրամասների վերաբերյալ սահմանակից համայնքների բնակչությունը և հանրությունը իրազեկվել է ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջից:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը չորրորդ եռամսյակում կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Արշավ Սևանա լիճ», «Կարմիր գիծ» ֆիլմ ԵՄ Կայուն էներգիայի շաբաթ, «Միջատներ. Վնասակարությունը և օգտակարությունը բնության մեջ», «Էնդեմիկ և կլիմայավարժեցված ձկներ», «Ձկնային պաշարներ. արգելք», «Սևանա լիճ» ֆիլմի դիտում:

Կազմակերպել և իրականացվել են նաև մի շարք ուսուցողական և ճանաչողական էքսկուրսիաներ մանկապարտեզների, դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների հետ:

Չորրորդ եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոն է այցելել 1184 այցելու, որոնցից 335-ը մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին:

**3.Ընդհանուր բաժին.**

2022 թվականի չորրորդ եռամսյակում՝ (դեկտեմբերի 15-ի դրությամբ) «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ է մուտքագրվել 719 գրություն, որից 169-ը շրջակա միջավայրի նախարարությունից, 550-ը՝ այլ իարավաբանական և ֆիզիկական անձանցից: Ելքագրվել է 942 գրություն, որից 80-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Գործավարության կարգին համապատասխան ստացված գրություններն ու նամակները ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու համար:

2022 թվականի չորրորդ եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 3 մարդ, ազատվել է 5 մարդ, իր ամենամյա նվազագույն արձակուրդից օգտվել է 35 աշխատակից:

Ընդհանուր բաժնի ավագ իրավաբանի և իրավաբանի կողմից 2022թ. չորրորդ եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝
   - 47 հայցադիմումներ գումարի բռնագանձման պահանջով, 4 հայցադիմում գումարի բռնագանձման և պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծելու պահանջով,
   - 2 դիմում դատական ակտը երկրորդ կնիքով հաստատելու մասին,,
   - 8 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու մասին,
2. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել մեկ բողոք ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի կայացրած դատական ակտի դեմ:
3. Վարձավճարը ուշացնելու համար 23 վարձակալների ներկայացվել են հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի մասին պայմանագիրը միակողմանի, վաղաժամկետ լուծելու առաջարկներ, ևս 9 պայմանագիրը միակողմանի, վաղաժամկետ լուծելու առաջարկի վերաբերյալ հայտարարություն տեղադրվել է «Ազդարար» ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում:
4. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն է ներկայացվել 31 գրություններ բնապահպանական իրավախախտումների վերաբերյալ:
5. Պատասխանվել է թվով 35 գրությունների (դիմումների):

**4.Ֆինանսահաշվապահական բաժին.**

2022 թվականի համար՝ ներառյալ չորրորդ եռամսյակը, համաձայն շրջակա միջավայրի նախարարության և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված N

ՇՄՆ-ԴՇ-22/03 պայմանագրի, պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման և Սևանա լճի ջրածածկ անատառտնկարկների մաքրման ծառայությունների համար որպես դրամաշնորհ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 391,164,3 հազար դրամ (ներառյալ ԱԱՀ), որից 303,897.7 հազար դրամը (ներառյալ ԱԱՀ) փաստացի ծախսվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձի վարձատրության համար, 71,796.1 հազար դրամը (ներառյալ ԱԱՀ) Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար, 15, 470.5 հազար դրամից (ներառյալ ԱԱՀ), որը հատկացվել էր ՊՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող և պետական գրանցման ենթակա 55 միավոր անշարժ գույքի գրանցման նպատակով՝ 3,606,8 հազար դրամը ծախսվել է (ներառյալ ԱԱՀ), իսկ մնացած 11,863.7 հազար դրամի (ներառյալ ԱԱՀ) ծախսի վերաբերյալ ՊՈԱԿ-ը 15.12.2022 թ. № Ն/19.2/10386 գրությամբ դիմել է շրջակա միջավայրի նախարարությանը դիրքորոշում ստանալու նպատակով:

Չորրորդ եռամսյակի ընթացքում Ֆինանսահաշվապահական բաժնի գանձումների մասնագետի կողմից պարբերաբար տեղեկացվել է վարձակալներին իրենց վարձավճարների մասին և ըստ ՊՈԱԿ-ում առկա տեղեկատվության կազմվել է շուրջ 520 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում երրորդ եռամսյակի ընթացքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 31,837,743.2 դրամ:

**5.Տնտեսագիտական և տնտեսական սպասարկման բաժին.**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնտեսագիտական և տնտեսական սպասարկման բաժնի կողմից 2022թ. չորրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ստորաբաժանումներին է տրամադրվել դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ:
2. Իրականացվել են շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:
3. Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում, կատարվել է վեց ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգում:
4. Կազմակերպվել և մյուս բաժինների հետ համատեղ մաքրվել ու բարեկարգվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական շենքի հարակից տարածքները:
5. Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:
6. Գույքագրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից վարձակալության տրված հիմնական այն միջոցները, որոնք ջրածածկ են, կամ գտնվում են

կիսաքանդ վիճակում, որոնց ցուցակները ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարություն:

7. Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել են համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրենի պ/կ Կ. Մնացականյան